

Մ Ա Ս Ն Գ .

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ

ԴԵՄՈԿՐԻՏՈՍ ԹԵՐՐԱԶԻՆԱ :

Յակոր մեղապարտի գերբ. — Արուն պատկանած է Հայկական առաջին ազգարանը. — Հ. Ա. Խշանի, Հ. Զարքհանականի, Լ. Էօյի կարձիքները. — Առաջին ազգարանը՝ մեցած իր առեղծուած. — Վեհական պատվեան երկու ժամանակիներ՝ սպային առաջին առաջին առաջին ժամանակին՝ Հայկական ցարդ անձանօթ մեցած. — Գեղարիսոս Թերրաչինա վիճակին՝ յին՝ հիմնացիր հայկական առաջին ազգարանի:

Ազգային մեծ յորելեաններու պահուն՝ Յակոր Մեղապարտ հասաւ փառքի գագաթնակէւու. Քիչ անհատներ՝ զրականութեան մէջ՝ բազզի այսրան մեծ անակընկարներու պատահած են: Իր անուամբ աւանդուած են մեզ հայերէն առաջին տպագրութիւնները. ոչ ոք բանասէրներէն կարող է հաստատել՝ ան տպարանի հիմնարկողն եղած է, մեծ գազա փարի մը յացազզր՝ թէ սոսկ գործաւոր մը. բայց ազգութեան բոլոր կեղրոնները տանեցին զինք իր հաւանական արդինքներուն համար: Անորոշութեան այս պարագային՝ Յակոր Մեղապարտը՝ խորհրդանիշ մ'է միայն, անուն մը՝ որուն ներքե Հայութիւնը իր երախտագիտութիւնը կր յայտնէ իր անձանօթ բարերարին:

Բայց այս յորելեաններուն մէջ՝ զգացման չափ՝ ազգային գիտութիւնն ալ իրաւունք ունի իր բաժինն ունենալու: Լաւագոյն տօնը հայ զիտութեան համար՝ է կարենալ լոյս մը սփոնէ հայկական տպագրութեան ծագման վրայ:

Բնականաբար վենետիկ՝ որ այս հանգէսին պատմական տօնաւ գայլը է՝ և կանխեց զայն կատարել ազգային ամէն կեզրոնէ առաջ՝

Ա. Այս յօպաւածք արդէն յանձնուած էր «Հայկական Յորելեան» իր բնըրազրաւթեան՝ եր սացանանք Աս. Ապօհանանք յօպաւածք՝ Մշտիկի 223 թուին մէջ (25 չոկու րունար տամարի), ուր կը տեղեկացնի թէ Հ. Առաքեկան Բարիզու մեծ գրացուցակի մը մէջ Հանգիուած է Գիմու կրիտոսի և իր թուներու արտօնագրերու պարզ և համառա յիշատակութեան մը: Պիտական վաշ շիրազիներու հրաւարակութիւնը լուծում պիտի այս այն ինցիդենտուն՝ զարս գրացուցակի մը ակզեկութիւնը բնականաբար ոնկարող էր ուսեհը:

իր պարտքը կը նկատէր ջանալ զիտական խնդրոյն վրայ լոյս մը սփռել:

Ներկայ ուսումնասիրութիւնը ցոյց պիտի տայ թէ հայկական գրքեր տպելու առաջարկը եղած է՝ գէթ պաշտօնապէս՝ 1498 թուականին, այսինքն է տպագրութեան զիտէն միայն 43 տարի վերջ, իսկ վենետիկանէն միայն 33, և թէ հայկական առաջին տպարանի հիմնողն եղած է Դիմոկրիտոս Թերրայինա անունով վենետիկեցի մը՝ որուն անոնքը – ճակատագրի սովորական անարդարութեամբ – տպահովապէս ոչ մէկէն արտարերուեցաւ՝ ազգային յոթելեաններուն ժամանակ:

Ա'

Ազգային հնագոյն տպագրութիւնները՝ – որոնք մի և նոյն Տպարանէ ծնունդ առած են՝ ամէնքն ալ D. I. Z. A. նշանը կրելնուն և նոյն տիսակ տառեր պարունակելնուն համար՝ – են հետեալները.

« 1. Պարզատումար, տպեալ ի 1512, ի Վենետիկ, տպարան D. I. Z. A. ի մատենադարանի Միսիթարեանց Վիեննայի (2 օր.) և Երուսաղեմի Ս. Յակոբեանց:

2. Պատարագատեատր, տպեալ ի 1513, ի նմին քաղաքի և նոյնագրոշմ տպարանի; ի Մատենադարանի Ս. Յակոբեանց և կեսարիոյ առաջնորդ Գեր. Տրդատ Ա. Պալեանի:

3. Աղբարագիրը, տպեալ ի 1513, դարձեալ ի նմին քաղաքի և նոյնագրոշմ տպարանի; Մի մի օրինակ ի Մատենադարանի Վենետիկոյ և Վիեննայի Միսիթարեանց, Երուսաղեմի Ս. Յակոբեանց և Տ. Վ. Պալեանի:

4. Տպարան, տպեալ ի 1513, ի Վենետիկ, որպէս ի վեր անզր: Երկու օրինակ ի Մատենադարանի Երուսաղեմի Ս. Յակոբեանց, և օրինակ մի առ Տ. Վ. Պալեանի:

5. Աղբարք, տպեալ ի 1513, ի Վենետիկ որպէս ի վեր անզր: ի Մատենադարանի Վենետիկոյ Միսիթարեանց և կեսարիոյ Ս. Կարապետի վանաց²:

1. Գրախոսութիւն.

Համելէս Ամսորեայ, «Հայ տպագրութեան ամենահին երախայրիք» (Հ. Գ. Գովորեկեանէ), 1889 թիւ 10, չոկտ. էջ 209:

Բարգմավէպ, «Առաջին դար հայկական տպագրութեանց» (Հ. Ա. Տիրոյեանէ), 1890 էջ 90, Արևելք, «Հայ տպագրութեան նախկին քառախայրիք» (Ասէակ եպ. Խաղայեանէ), 1890, 29 հոկտ. (Հ. Տ.), թիւ 2036.

Համելէս Ամսորեայ, «Հայ տպագրութեան ամենահին երախայրիք մ'ալ» (Տրդատ Վ. Պալեանէ), 1894, գեկանմբեկ, էջ 357 (յաւելուածով մը՝ Հ. Գ. Գ. է).

«Պատմութիւն հայկական տպագրութեան՝ սկզբնաւորութիւնն մինչ առ մեզ» (Հ. Գարեգին Վ. Արքհանալեանէ), Վենետիկ, 1895.

«Հայ-Վենետ» (Հ. Ա. Ամելշանէ), Վենետիկ, 1896.

«Հայկական տպագրութիւն, մը հետեւը, դրականութիւնը անցեալում» (Լոյլ), Թիֆլիս, 2 հասոր, 1902:

2. Հ. Գարքհանալեան Պէտք, էջ 9.

Այս զրբերէն հնագոյնը՝ այն է Պարզատումարը՝ պէտք է 512 թուին զրուած ըլլայ՝ եթէ ո՞չ աւելի առաջ։ Այս կէտա կենսական ըլլալով մեր ինդրոյն համար՝ ի մէջ կը բերենք Հ. Գովրիկեանի ըլլած պատճառաբանութիւնը¹.

«... Երրորդ երեսն կը սկսի բուն զիրքն այսպէս. « Ինն հարիր ու վարսունումէկն. զիրն եռն և և տանուտերն ի վերեն կարիքն և. և այլն կարգաւ երթա»։ Ուստի տօնացոյցը կը սկսի 962 — Քր. 1512 թուականին։

«Գրքին վրայ վերոյիշեալ 961 թուականէն զատ՝ չկայ թուական մը, որով տպագրութեան տարին կարենայինք ճշգիւ որոշել։ Այսու ամենայնիւ զօրաւոր կոուան մըն է այս 961 թուականը, որով կրնանք քանի մը քայլ առնուլ և հետեւութեանց համնիլ։

Տօնացոյց կամ տումար մը շինողին առաջին զործքն է տարւոյն թիւը գնել, այն տարւոյն թիւը, որուն մէջն է, կամ որուն համար տոմարը կը շինուի։ Ուստի բոլորովին անհաւանական է թէ մատենա զիրն իրմէ շատ ետքն եկող տարւոյ մը տարեթիւը զնէ իւր զրուածքին վրայ։

Բայց չունի նաև պատճառ մը մատենագիրն՝ անցեալ տարւոյ թուական գնել զրած ու անշուշտ ժողովրդեան զործածութեան համար շինած մատենին՝ մանաւանդ տոմարին վրայ, որ նպատակին չէր կրնար ծառայել։ Եւ իրօք ինչո՞ւ ներկայ տարւոյն մէջ տպուած տօնացուցին վրայ, օրինակի աղագաւ, զնենք ասկէ 50 տարի առաջ անցած թուական մը, այն է 1839, և կամ նոյնչափ տարի ետքը՝ 1939 թուականը։

«Յայտնի է ուրեմն որ առաջիկայ մատենանը տպուած է կամ այն տարին, զոր կը ցուցնէ թուականը, այսինքն՝ 961 = 1512 և կամ քանի մը ամիս, և զուցէ նոյն իսկ տարի մը յառաջ սկսած է, որպէս զի նշանակուած 961 տարւոյն համար՝ տոմարը պատրաստ ու գործածելի ըլլայ։»

Այս զրբերու տպագրութեան հնագոյն թուականին չափ կարեոր է մեզ զիտնալ՝ թէ ո՞ր Հայազգոյն երկանց արդիւնքն են անոնք։ Անոր անունը ծանօթ է մեզ երկու յիշատակարաններէ, մին խապայիան եպիսկոպոսի Պատարագատեարէն².

«Տպագրեցաւ սուրբ տառս ի ԶՀԲ (1523-4) ի աստուածապահ դաղաքս ի վեճեկ, որ է վենետիկ, Ֆուանկաստան, մեղապարտ Յակոբին, որը կարդայք մեղաց թողութիւն ինդրեցէք»։

1. Էջ 210.

2. Այս յիշատակարանը տպուած չէ Արևելիքի մէջ (թիւ 2036), այլ Հայ-Վենետիկ մէջ (էջ 208) Հ. Ալիշանէն՝ որ կը թուի զայն սուսցած է առանձնական թղթակցութեամբ։

Մի և նոյն յիշատակարանի ուղղագոյն ձեր ներկայացուց Տրդատ Վ. Պալեան՝ իր Պատարագատեստրի մասին տուած տեղեկութեան մէջ¹.

«Գրեցաւ սուրբ տառ ի Զիթ (— 1513), ի աստուածապահ քաղաք ի Վէնէժ որ է վենետիկ ֆուանկատան. ձեռամբ մեղապարտ Յակոբին. ով որ կարգայր մեղաց թողութիւն խնդրեցէք աստուծոյ»:

Այս վերջին յիշատակարանս երկու կարենոր տարրերութիւններ ունի առաջինէն. նախ որ «Ճպագրեցաւ» բարին տեղ ունինք «Գրեցաւ», ինչ որ կրնայ բոլորովին տարրեր նշանակութեամբ գործածուած ըլլալ, յետոյ՝ 1523 թուականին տեղ ունինք 1513:

Ինչպէս իրաւամբ զիտել տուած է Հ. Գ. Գ.՝ յիշատակարանի ուղղագոյն ձեռն է այն՝ ինչ որ մեզ կը ներկայացնէ իր տեսած ձեռագրի վրայէն՝ Տ. Վ. Պալեան:

Այս բոլոր վաւերագիրներէն կը ստացուէր հետագայ եզրակացութիւնը՝ թէ մեր հնագոյն տպագրութիւնները կատարուած են 1512 և 1513 թուականներուն և թէ անոնց մէջ արդիւնք ունեցած է Յակոր մեղապարտ:

Ի՞նչ եղած էր ասոր ճշմարիտ դերը. ի՞նքն էր ձեռնարկութեան յղացողն ու զիտաւորը՝ թէ միայն երկրորդական գործիք մը: Այս բանս որոշելու համար ուշադրութեան առնուեցան D. I. Z. A. տպարանական նշանը:

Հ. Գովրիկեան բագմաթիւ մենագիրներ ուսումնասիրելէ վերջ, արտատպեց հատ մը՝² անոր Հայոց առաջին տպարանին մենագրին հետ ո՛չ մէկ վերաբերութիւն ունենալն ապացուցանելու համար:

Խապայեան եպիսկոպոս, Պալեան Վ., Հ. Գ. Գալէմքեար տպարանի մասին ո՛չ մէկ ենթագրութիւն ընելու խոհեմութիւնն ունեցան:

Հ. Աթանաս Վ. Տիրոյեան՝³ տառանշանը արտատպելէ վերջ զիտել կու տար միայն՝ թէ ան նոյն է «ամեններն ինչ որ Ամսօրեայ Հանդէս կը հաւաստէ դրոշմուած լինել նաև Տօնացոյց մատենին մէջ»:

Prince d' Eslinge՝ հեղինակ եռահատոր պատկերագարդ շքեղ գործի մը՝ «Les livres à figures vénitiens de la fin du XV. siècle et du commencement du XVI.⁴», թէպէտ մասնագէտ վենետիկեան նկարչութեան և մենագրերու, ուրիշ բան չէ կարողացած ընել՝ բայց եթէ յիշել մեր Ուրբարագիրքն՝⁵ և Աղրարքը՝⁶ անոնցմէ նմանահանութիւններ տալով, բայց տպարանական տառանշաններուն ո՛չ մէկ մեկնութիւն՝⁸:

1. Համդէս Ամսօրեայ, 1894, էջ 359.

2. Համդէս, 1894, էջ 362.

3. Համդէս, 1889, էջ 211.

4. Բազմապէտ, 1890, էջ 91.

5. Paris, Henri Leclerc, 1908.

6. Էջ 269.

7. Էջ 370.

8. Ե՞ս կը գոհանայ ըսելով. «A la fin marque typographique, aux initiales D. I.

Պէտք է զարձեալ Հ. Ալիշանի դիմել՝ նոր տեղեկութիւն մը ստանալու համար. հայկական առաջին տպարանին համար՝ նա կը գրէր.

«Բաղաբն յայտնուեցաւ, բայց տպագրատուն զեռ ոչ. կընար կարծուիլ որ նոյն իսկ Հայոց տան մէջ ըլլայ, ինչպէս ուրիշ տպագրեալ չին գիրք մի կ'ըսէ. Այս Հայ տպագրութեան կարեոր խնդրոյն ծանօթութեան՝ մեծ լոյս մ'է, բայց զեռ ո՛չ բաւական. կու մնայ փափագելի գանել այս մեղապարտ Յակոբէն առաջ բարեպաշտ և բարերազդ Հայ տպագրող մը. կամ եթէ նոյն ինքն Յակոբն է առաջին տպագրողն, ի՞նչ կերպով էին հայերէն տառերը: Նոյնպէս, ոչ միայն մեզ, այլ և օտարազգի զիտնոց շատ հետաքրքրական և ձանձնալ զրոց բուն վեճետիկան տպագրատունն այլ, որոյ նշանն... դրուած է այդ յակորատիմ զրոց վերջին երեսը. բայց զեռ չէ՝ ստուգուած տպագրատան տէրն, այլ հաւանօրէն է Zuan Andrea հռչակաւոր տպագրողն և փորագրող¹»:

Հ. Գարեգին վ. Զարբհանալեան աւելի կ'ընդարձակէ ենթաղբութեանց շրջանը.

«Հետեւարար ո՞վ էր ուրեմն այդ օտարազգին, որոյ գործարանէն ելած են յիշեալ տպագրութիւնք:

Այս հետաքննելի հարցման պատասխանը հմտագունից և տեղեկաց յանձնելով, սա միայն ըսենք՝ որ նոյն ատեն ի Վենետիկ բաղաբի տպարանի տէր և տպելու արտոնութիւն ունեցող անձանց ցուցակը և գործարանաց նշանազրոշմը բնենելով, որ արդէն հրատարակուած են, չգտնուեցաւ անուն մը՝ այդ սկզբնատառից մերձաւոր կամ համանման կնիք մը: Միայն հռչականուն Ալտոյ Մանուցիոյ տպագրապետի աներ մը կը յիշատակուի, նոյն արուեստով զբաղող Antonio Zaroto անուամբ, ուրիշ մ'ալ I. Zanandrea Asolano, որոնք գործած են մինչեւ ի 1513 և անզը. երրորդ մ'ալ D. Zuan Matteo Asola, որոց 1495ին ըրած տպագրութեան մը յիշատակութեան հանդիպեր ենք, որը եղած պիտի ըլլան այս զրոց տպագրիչը, և միւս չորրորդ մը՝ աւելի Zuan Andrea կոչուած անձ մը: Բայց ինչպէս կանխեցինք ըսել՝ ստուգագոյն ծանօթութիւնը և տեղեկութիւնը ի բանիբուն հմտից և ձեռնհասից սպասելով՝ անցնինք մեր նիւթին²:

Լէօ հետեւալ զիտողութիւնը կ'ընէ հայ առաջին տպագրողի մասին. «1512—1513 թւականների հրատարակութիւնները Հայաստանի մէջ լոյս չտեսան, այլ նրանից շատ և շատ հեռու մի տեղ Վենետիկում:

«Իւրաքանչիւր ազգ մի առանձին պարծանքով է պահում իր առաջին տպագրիչի անունը: Իսկ մենք չգիտենք թէ ո՞վ էր որ առաջին

Z. A.» (269); «marque typographique, comme dans le précédent ouvrage tirée en rouge» (270).

1. Հայ-Վենետիկ, էջ 209.

2. Պէտք էջ 12.

անգամ հայերէն տառեր ձուլեց և զիրը տպեց։ Ճիշտ է, 1513ի հրատարակութիւնների մէջ յիշատակվում է մի ոմն Յակոր, բայց այս մարդու մասին մենք ոչ մի տեղեկութիւն չունենք։ Եւ հազիւթէ Յակոր եղած լինի առաջին հայ տպարանատէրն ու տպագրիչը։ Միանգամայն հաւանական է որ այդ բոլոր վենետիկեան հրատարակութիւնները տպագրված են իտալական տպարանում, իտալացիների ձեռքով¹։

Բ

Այսօրան ենթաղրութիւններու ծնունդ տուող և երկար ժամանակէ ի վեր առեղծուած մնացող խնդրոյ մը ուսումնասիրութեան ձեռնարկելով՝ մեր ալ առաջին մտածումն եղաւ՝ գտնել Յակոր Մեղապարտի հրատարակչական նշանը։

Այս մասին եղած ամէն քննութիւն ապարդիմն մնաց և ո՛չ մէկ լուսարանութիւն կարելի եղաւ ստանալ Վենետիկեան պատկերներու, տպագրութեան և նշաններուն նուիրուած զրբերէն²։

Բաց աստի, le duc de Rivoli իր «Վենետիկեան Պատարագամատոյցներու» յառաջարանին մէջ՝ ներկայացնելով այլկայլ տպագրական նշաններ՝ զիտել կու տայ թէ տառերը միշտ տպագրապետի անունը ցոյց չեն տար՝ այլ նոյն զրբի վրայ աշխատող ո՛և է փորագրողի կամ գործաորի, այնպէս որ կան իտալերէն բազմաթիւ զրբեր՝ որոնց մենագրութիւնները կարելի չէ նոյնացնել ցարդ ծանօթ տպագրապետներու հետ։

Այս զիտողութեան համեմատ՝ նոյն իսկ յաջող կերպով տառանը-շանները տպագրողի մ'անուան հետ նոյնացուցած ժամանակ՝ կարելի չէ՝ բացարձակ վստահութիւն ունենալ թէ անոնք տարբեր անուն մը չեն ներկայացներ։

Հարկ էր ուրեմն մոռանալ Յակորի նշանատառերը՝ և լուսարանութեան միակ յոյսը զնել՝ Վենետիկոյ պետական զիւանական թուղթերուն վրայ։

Սոյն բաղաբի տպագրութեանց նուիրեալ զրբերէն ամենէն աւելի մեր ուշագրութիւնը զրաւեց Horatio F. Brownի «Վենետիկեան մա-

1. Հայկական տպագրութիւն, Թիֆլիս, 1904, Ա. հա. էջ 15.

2. Ցեցեցինը քիչ մ'առաջ Prince d'Esslingը եռահասոր զործը.

Համար Կառլո Կաստելլանի «La stampa in Venezia, dalla sua origine alla morte di Aldo Manuzio Seniore», Venezia, Ongania, 1889.

Le duc de Rivoli «Les Missels imprimés à Venise, de 1541 à 1600», պատկերագրութիւնը.

Dr. Paul Kristellen «Die italienischen Buchdrucker und Verlegerzeichen bis 1525, Strassburg, 1893.

Ongania, «L'arte della stampa a Venezia», հայլն.

Հայկ. Յորելեամ

մուլլ¹» անգլիերէն երկասիրութիւնը, զրբին հտեղ պարունակած պաշտօնական բազմաթիւ վաւերագիրներուն համար:

Brown հետեւեալ զետաքրքրական տեղեկութիւնը կու տայ՝ «Եթէ պակսի վենետիկան մամուլի իտալերէն պատմութեանց մէջ²:

«1498 տարւոյն՝ Գիմոկրիտոս թէրբաշինա անուամբ մէկը, քաղաքացի վենետիկոյ և բնակիչ վենետիկոյ, ֆողովէն խնդրեց մենափառութեան իրաւունք, բանենինց տարուան համար, բոլոր այն զրբուն՝ որ կը տպագրուին արարերէն, մաւրիտաներէն, ասորերէն, հայերէն, հնդկերէն և Պէրպէրիստանի Եղուով։ Իր խնդրիքը ընդունուեցաւ, բայց ինքը մեռաւ 1513ի մայիսին առաջ, առանց այս լիզուներով ո՛հ է զործ հրատարակած ըլլալու՝ թէպէտ պատրաստութեանց համար շատ սոսակ ծախսած ըլլար։ Իւր Լէլիոյ և Փաօլոյ թոռները, որդիք Մացարիմոսի³ Գիմոկրիտոսի եղրօր, աղերսազիր մը տուին այդ առանձնաշնորհութիւնը բանենինց տարի շարունակելու համար, ինչ որ շնորհուեցաւ իրենց։ Աւակայն Փանցըրը չի յիշատակեր ո՛չ հօրեղբայրը, ո՛չ թոռները, և թէրբաշինայէն կատարուած ո՛չ մէկ հրատարակութիւն ծանօթ է⁴» :

Աւրիշ տեղ Brown հետեւեալ զիտողութիւնը կ'ընէ. «Բայց թէրբաշինաներէն տպուած զործերէն ո՛չ մէկ հետը մնացած է։ Առաջին հայ զիրքը՝ վենետիկոյ մէջ տպուած՝ լոյս տեսաւ 1565ին»։

Եթէ Հայերուն անծանօթ մնացած է Գիմոկրիտոսը, վենետիկան մամուլի պատմարաններուն ալ անծանօթ են հայկական 1512-13ի հրատարակութիւնները և այս պատճառաւ ձշմարտութիւնը երկուքին համար ալ թաղուած կը մնար։

Brown իր տեղեկութիւնները կը հիմնէ R. Fuliniի հետեւեալ յօդուածին վրայ.

«Վաւերագիրներ՝ վենետիկոյ մամուլի պատմութեան ծառայերու համար⁵»։

R. Fulin հրատարակելով մի առ մի վենետիկան մամուլի վերաբերեալ բոլոր հրովարտակները՝ ի կարգին ի մէջ կը բերէ նաև երկու պաշտօնական թուղթերը՝ Գիմոկրիտոս թէրբաշինայի վերաբերեալ, բայց ինքն ալ Հայերու մասին ո՛չ մէկ եղրակացութեան կը յանգի, կանգ առնելով առաջին հայ զրբի 1565ին տպուած ըլլալու ուրուականին առջեւ։ ծանօթութեան մէջ կ'ըսէ ան.

1. «The venitian printing press», an historical study based upon documents for the most part hitherto unpublished, by Horatio F. Brown, London, 1891.

2. Brown ոյն տեղեկութիւնը կը կրնէ սակ յէլ 106.

3. լէ 41.

4. «Documenti per servire alla storia della tipografia veneziana», Archivio Veneto, 1882, չառ. 23, էլ 84.

Վաւերագիրները առնածած են Notatorio del Collegio, Gli atti del Senato, Notario dei Capi del Consiglio dei Dieci հաւաքածուներէն.

5. լէ 133.

«Փանցըր չի' յիշեր այս տպագրովը։ Եւ ըստ Հ. Ալիշանի Geonomia armena (Վենետիկ, 1881, էջ 6) առաջին հայ գիրքը արպուեցաւ ի Վենետիկ, տառիւք Արզար Թողքաթեցւոյ (Եւդոկիացւոյ)»։

R. Fulin իր հրատարակութեանց մէջ՝ ուր հրովարտակներու պատմական բովանդակութեան աւելի ուշ կը զնէ՛ ի բաց կը թողու սկզբնաւորութեան սովորական բանաձեռերը՝ կամ վերջաւորութեան ստորագրութիւնները։ Որովհետեւ Փանցըր կ'անգիտանայ Թէրրաչինան՝ անհրաժեշտ էր Վենետիկոյ կառավարչական դիւանին մէջ հետազօտել և գտնել զմեզ հետաքրքրող երկու վաւերագիրները։

Ի զուր եղաւ Ժողովի 1498ի արձանագրութեանց մէջ՝ Դեմոկրիտոսի մասին տրուած հրովարտակը փնտուելը։ Նիւթի նոյնութեան պատճառաւ՝ փոխանցուած է ան 1513ի արձանագրութեանց մէջ։

Այսպէս Վենետիկեան պետական դիւանի Notatorio del Collegio, 1512-1514, I, R° 25 հատորին մէջ կը զտնենք հետեւել աղերսազիրները՝ որ պաշտօնապէս ընդունուած կը յայտարարուին։

Ս. — ԳԵՐՈԿՐԻՏՈՍԻ ՄԵՇԱՇԽԱՐՁԻ ՄԱՍԻՆ ՏՐՈՒԱՅ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ¹

Բ Ն Ա Գ Ի Ր

S.^{mo} principj et R.^{mo} D.^{mo} Venetiae. Humiliter supplica el fedel suo servitor et citadin suo venetian, Democrito Terracina, habitante in Venetia; cum sit che l'habia da far stampar alcune opere in lingua arabica, moresca, soriana, armenicha, indiana et barbarescha, cum grandissima et quasi intollerabel spexa, et cum fadige et pericoli grandissimi, etiam in utilità della republica christiana, et exaltation de la fede, et augmento de la scientia naturale et ancor la medicina, per conservation de la salute de le anime et corpi de molti et infiniti fidel christian, che usano le soprascritte lengue; considerata la effrenata cupidità de alcuni, e lo livor et iniquità de molti, li quali non resteriano voler tor el fructo de lo inzegno et spexe et fatiche del soprascritto supplicante, cum farli concorrentia de le soprascritte opere, poi che fusseno de sì luntani paesi conducte in questa città de Venetia; pertanto supplica quella se degnj concederli gratia, che in termine de anni vinticinque proximi,

1. Տեղական գիրոյիշեամբ դրութեան 49 էջը։

nissuno ardisca stampar o far stampar libri di qualunque sorte se siano in lettere de le lingue sopraserite, nè qui in Venetia, nè in luochi subditi a la Serenità Vostra, nè stampati in altri luoghi et terre, nè in questa inclita cità, nè navigarli in vostri navilij, nè di vostri subditi portar o vender nè far vender in li soprascritti vostri luoghi et terre, nè per il colpho cun navilij forestieri, soto pena ogni fiata de perder dicti libri et pagar ducati duxento d'oro; la mittà vadi all'hospedal de S. Antonio, el resto ai Avogadori de Comun, obligandosse lo soprascrito supplicante non stampar mai libri, li quali tractino cossa alcuna pertinente a la setta maomettana, nè che siano in favor de quella, nè contra la nostra sanctissima fede, ma tute in favor et augmento de la fede christiana.

× dicto supp.^{ti} concedatur quantum in supp.ⁿⁱ continetur.

Die XV Julij 1498.

Consil:

S. Franc: Marcello
S. Marinus Leonus

S. Franc. Valarisso
S. Vincentius Barbaro { Viceconsil.

Ego Eneas Carponius not. duk. autentice exemplavj.

Բ. - ԳԵՂՄՈԿՐԻՏՈՍՈՒ ԹԵՐԹՈՉԻՆՈՅՑԻ ԺԱՌԱՆԳՆԵՐՈՒՆ
ՏՊՈՒՄԸ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Ser.^{mo} principi: et ex.^{mo} D.mo Venetiae I. Humiliter supplicano li fedeli suoi servitori et citadini venetiani habitanti in Venetia, Lelio et Paulo di Maximi, cum sit che del 1498 adi XV Luio missier Democrito Terrazina, cussi chiamato, obtinesse, una gratia de la Illustrissima Signoria, contrascripto tenor; et essendo occorso ch'el dicto missier Democrito, per voluntà de la Majestà Divina sia defuncto et passado da questa presente vita senza dar principio alcuno, ma solamente habia facto de grande et quasi intollerabel spexe senza alcuna utilità et habia lassati li sopra-

scriti supplicanti, videlicet Lelio et Paulo di Maximi soi nevodi, figli d' uno suo fratello, i quali humelmente supplcano et dimandano che quella se degni confirmarli a loro dicta gratia per anni vinticinque proximi, e che nisuno ardisca stampar nè far stampar dicti libri, sotto le pene contrascripte in omnibus et per omnia.

Die 31imo Maij 1513

× Concedatur dictis supplicantibus quantum posit.

Consil :

- S. Dominicus Benedicto.
- S. Petrus Marcello.
- S. Aloisius Sanut.
- S. Franc. Boragadoro.

ԹԱՐԳՎԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Ամենապայծառ իշխանին և յարգ. Տեառն վենետիկոյ. Խոնարհաբար աղերս կը մատուցանէ իւր հաւատարիմ ծառան և իւր վենետիկեցի քաղաքցին՝ Դեմոկրիտոս թերրացինա, բնակող ի վենետիկ, որ ունի տպագրելիք մի քանի զործեր արարերէն, մաւրիտաներէն, ասորերէն, հայերէն, հնդկերէն և պէրպէրիստանի լեզուներով, ամենամեծ և զրեթէ անտանելի ծախցերով, ամենամեծ յոգնութեամբ և վտանգներով, ու նաև յօգուտ քրիստոնեայ հասարակապետութեան, ի պարծանս հաւատոյ և ի բարգաւաճումն բնական զիտութեան ու նաև թշկութեան, պահելու համար հոգիներու և մարմիններու առողջութիւնը, շատ և անհամար քրիստոնեաներուն մէջ, որ վերոյիշեալ զրբերը կը գործածեն. Նկատելով ոմանց անսանձ ցանկութիւնը և շատերու նախանձն և ամրաշտութիւնը, որ պիտի ետ չկենան վերոյիշեալ աղերսարկուին հանձարի, ծախցերու և յոգնութեանց պատովը յափշտակելէ, վերոյիշեալ զործերուն մէջ իրեն մրցակցութիւն ընելով, որոնք այնքան հեռաւոր երկիրներէ բերուեցան այս վենետիկ քաղաքին մէջ. ասոր համար կ'աղաչէ որ ան հաճի ընել իրեն այս շնորհը, որ մերձաւոր քասենինեղ տարիներուն մէջ ո՛չ որ յանդղնի տպել կամ տպել տալ ո՛ և է տեսակի զիրը որ վերոյիշեալ լեզուներու տառերով են, ո՛չ հոս ի վենետիկ, ո՛չ նորին Ամենապայծառութեան հպատակող տեղերուն մէջ, և եթէ տպագրուած ըլլան ուրիշ տեղեր և երկիրներ կամ այս աստուածապահ քաղաքին մէջ, ձեր նաւերը չփոխադրեն անոնք, ձեր հպատակները չկրեն, չծախեն ո՛չ ալ ծախել տան անոնք՝ վերոյիշեալ տեղերու և երկիրներուն մէջ, ո՛չ ալ ծովածոցէն՝ օտար նաւերով, ընդ պատժով ամէն անգամ

Վերոյիշեալ զրբերը կորսնցնելու և երկուհարիւր տուքաթ ուկի վճարելու. կէսը երթայ Ս. Անտոնի հիւանդանոցին, մնացածը՝ Հասարակութեան փաստաբաններուն. վերոյիշեալ աղերսարկուն կը պարտաւորէ ինքզինը՝ ամեննեին չտպագրել զրբեր, որ մահմետական կրօնքի վերաբերեալ նիւթերու վրայ խօսին, ոչ ալ իրեն նպաստաւոր ըլլան, ոչ ալ մեր ամենասուրբ հաւատքին զէմ, այլ ամէնքն ալ ի նպաստ և յաճումն ըրիստոնէական հաւատոյ:

× Վերոյիշեալ աղերսարկուին շնորհուի ինչ որ աղերսագրին մէջ պարունակուած է:

15 Յուլիս 1498

ԽՈՐՀՄԳԱԿԱԿԱՆՔ

Ծ(առայ). Թրանչ. Մարչէլլոյ

Ծ. Մարինուս Լէոնուս

Ծ. Թրանչ. Վալարիսոյ

Ծ. Վինչենցիուս Պարպառոյ

Փոխխորհրդ.

Ես Ենէսա Քարտիոնիուս՝ տօժական քարտուղար՝ վաւերական կերպով ընդորինակեցի:

Ամենապայծառ իշխանին և գեր. Տեսոն Վենետիկոյ. խոնարհարար աղերս կը մատուցանեն իւր հաւատարիմ ծառայք Վենետիկոյ քաղաքացիք և Վենետիկ բնակող, Լէլիոյ և Փաոլոյ Մաքսիմեան, որովհետեւ 1498 յուլիս 1օին պարոն Դիմոկրիտոս Թէրրաչինա, այսպէս կոչուած, շնորհը մը ստացաւ Զեր Գերապայծառ Տէրութենէն, հոս զետեղուած պարունակութեամբ. և որովհետեւ հանդիպեցաւ որ վերոյիշեալ պարոն Դիմոկրիտոսը, Աստուածային Մեծվայելչութեան կամքով վախճանեցաւ՝ և այս ներկայ կեանքէն փոխադրուեցաւ, առանց ո՛ և է սկիզբն տալու, այլ միայն մեծ և անտանելի ծախքեր ըրաւ առանց ո՛ և է օգուտի, և թողուց վերոյիշեալ աղերսարկուները, այսինքն Լէլիոյ և Փաոլոյ Մաքսիմեան՝ իւր թոռները՝ իր մէկ եղրօր տղաքները, անոնց խոնարհարար կ'աղաքէն և կը խնդրեն՝ որ Նա (Նորին Տէրութիւնը) համի հաստատել իրենց վերոյիշեալ շնորհը՝ քսանեհինգ մերձակայ տարիներու համար, և ո՛չ որ յանդզնի տպել կամ տպել տալ վերոյիշեալ զրբերը, ընդ պատճովք որ նշանակուած են՝ ամէն բանի մէջ և ամէն բանի համար:

31 Մայիս 1513

× Շնորհուի վերոյիշեալ աղերսարկուներուն՝ ինչ որ առաջարկուած է:

ԽՈՐՀՄԳԱԿԱԿԱՆՔ

Ծ(առայ). Դոմինիքուս Պէնէտիքթոյ — Ծ. Փեթրուս Մարչէլլոյ

Ծ. Ալոյիզիուս Սանութ — Ծ. Թրանչ. Պոռակատոռոյ

Այս երկու վաւերագիրներէն օրինաւոր կը համարիմ հետեւեալ եղրակացութիւնները հանել.

1. Քանի որ 1498էն մինչև 1523 (25 տարի) հայերէն բոլոր զրբերը ո՞չ միայն տպերու այլ նաև վաճառելու բացարձակ մենավաճառը ձեռք բերած էր Գեմոկրիտոս թերրաչինա, ամենախիստ պատիժներ սահմանել տալով իր մենավաճառին դէմ՝ խարդախողներուն, ինընին կը հետեւի թէ 1512 և 1513 թուականով վենետիկ տպուած գրութիւնները, որոնք ծածկաբար տպուած չեն, այլ կը կրին բազարի և տպագրողի անունները՝ տպագրական նշանի հետ, պէտք է որ Գեմոկրիտոս թերրաչինայի տպարանէն ելած ըլլան, մանաւանդ որ վենետիկան պետական դիւանը ո՞չ մէկ վաւերագիր կը պարունակէ ուր հայերէն տըպելու իրաւունքը Գեմոկրիտոսսէն զատ ուրիշ ո՞ւ է մէկու մը շնորհուի:

2. Աղերսագրին մէջ Լէլիոյ և Փաօլոյ կը նշանակեն՝ թէ հօրեղբայրնին ամէն ծախսք ըրաւ բայց ո՞չ մէկ բանի սկիզբ տուաւ, ըստ այսմ բոլոր հայերէն գրութիւնները՝ թէպէտ կանխապէս պատրաստուած՝ բայց 1513ի մայիսէն վերջ պէտք է լոյս տեսած ըլլան։ Բնականարար պարզատումարը յօրինուած էր 1512 տարւոյն համար, բայց տպագրական նիւթական գժուարութիւնը կրնային անոր հրատարակութիւնը խափանել, — ինչ որ եղած էր՝ ըստ Լէլիոյի և Փաօլոյի՝ շատ զրբերու համար։

Դիտել կու տանք սակայն՝ թէ բացարձակ կարեւորութիւն մը տաւու չէ Լէլիոյի և Փաօլոյի «ո՞չ մէկ բանի սկիզբ տուաւ խօսքին»։ տպագրական մենավաճառները՝ վենետիկոյ մէջ՝ կը շնորհուէին միայն 10 տարուան համար։ Գեմոկրիտոսի 25 տարի տրուած է պարզ այն պատճառաւ՝ որ անծանօթ լեզուներով կը տպագրէր և ըիշ մրցակից կրնար ունենալ վենետիկոյ մէջ։ Իր եղրօրորդիները կը յանդգնէին ո՞չ միայն 25 տարի պահանջել, այլ՝ իրը թէ Գեմոկրիտոս ամենեին իր մենավաճառէն օգտուած չըլլար՝ այդ 25 տարուան սկզբաւորութիւնը՝ իրենց աղերսագրի թուականէն հաշուել տալ։ Այս նպատակին հասնելու համար՝ զարմանալի չէ եթէ «Պարզատումար»ը և այլ նման փոքր հրատարակութիւնները ուզած ըլլան իրը և ո՞չ իսկ հաշուելի զործեր նկատել տալ, և կարելի է գեր յոյս ունենալ որ 1512էն առաջ հայերէն փոքր տպագրութիւններ գտնուին։

3. Ի՞նչ ալ ըլլայ Գեմոկրիտոսի արդիւնքը՝ արեւելեան լեզուներու առաջին տպարանն յղանալուն մէջ՝ բայց անտարակոյս է որ Հայում մ'օգնականութեան պիտի կարօտէր, և շատ հաւանական է որ անոր թելագրութեանց ներքե զործեր։ 1498 թուականը շատ նշանակալից է, որովհետեւ ճիշդ նախորդ տարւոյն մէջ՝ Հայեր առանձին տուն մ'ունեցան վենետիկ՝ գաղթող ազգայիններու համար, և այս ժամանակին

համար Պէմպոյ պատմագիրը կ'ըսէ. «Հայք, այդ հեռաւոր ժողովուրդն, բաղաքավարութեամբ ընդունուած (ի վենետաց), բարեկամական տեսարան մ'ընծայեցին բաղրին¹»:

Թէպէտ Դեմոկրիտոս անձամբ շատ երկիրներ ճանապարհորդած և զրբեր հաւաքած էր՝ բայց նոյն իսկ անոնց ընտրութիւնը կարող չէր ընկել առանց Հայերու ընկերակցութեան։ Այսպէս Վենետիկան հայ գուղթականութեան կազմակերպուիլը (1497) և հայ տպագրութեան պաշտօնապէս խնդրուիլը իրարու ժամանակակից, զիրար լուսաբանող դէսրեր կ'ըլլան։

4. Տպարանական նշանին՝ D. I. Z. A. կարելի է զանազան մեկնութիւններ տալ։

ա. Անտարակոյս՝ D «Democrito» անունն է. այս անունին վերջ պիտի սպասուէր T. բայց նկատելու է որ թէրրաչինա Հառմայ գաւառի ծովահայեաց բաղաք մ'է որմէն անշուշտ եկած ըլլալով Դեմոկրիտոս այդ ժողովրդական յորջործումն ստացած էր, ինչ որ իր թոռններն ալ նշանակել կը թուին «cassì chiamato» արսէս կոչուած բացատրութեամբ։ Թէրրաչինա իտալական ընտանիկան անուան սովորական վերջաւորութիւնը չունի։ Եթէ այսպէս՝ I կարող է Դեմոկրիտոսի ընտանիկան անձանօթ մնացած անուան սկզբնատառն ըլլալ։

բ. Թէրրաչինայի տպարանը բազմալեզուեան ըլլալով՝ հաւանական էր տառերը՝ տպագրող ընկերութեան գլխաւորներու անունները նշանակեն. այսպէս D = Democrito, I = Iacob (Յակոբ)։ Իսկ Z. A. սկզբնատառերով բազմաթիւ տպագրողներ գտնել կարելի է նոյն դարուն։ Հ. Ալչան և Հ. Զարրհանալեան կը յիշեն Zuan Andrea, Zuanandrea Asolano, Antonio Zaroto, Zuan Matteo Asola, բայց կարելի է աւելցնել ուրիշ շատեր. Antonelli Zecca (1478), Antonio de Zanoti (1497), Antonius de Zanchis (1501), Augustinus de Zanis (1509), և այլն, և այլն։ Կարելի չէ որոշել թէ այս անձնաւորութիւններէն որո՞ւն և կամ ուրիշ ո՞ր անձի յատկացնելու է տառերը։

գ. Նկատելով որ մեր դարու Gի և նոյն իսկ Ծի տեղ Z կը գործածէր Վենետիկ (Cedtero = Zettero, Zorzo, Zuan, Zugno) կարելի է Զի մէջ Zacommo զբութիւնը տեսնալ. ըստ այսմ մենագիրը ցոյց կու տայ Democrito Italiano և Zocomo Armeno՝ ընկերակցած՝ տպագրութեան գործին մէջ։

Այսպէս տպագրական մենագիրը ո՞չ միայն ո՞չ մէկ առարկութիւն կը ներկայացնէ Դեմոկրիտոսի դերին գէմ, այլ միայն անով անորոշ կը մնայ՝ որ բազմաթիւ մեկնութիւններ կարող է գտնալ, և այս տպարագան շատ հեռի է գրութեանս ընդհանուր եզրակացութեանց անհապատ ըլլալ։

Փոքր հրատարակութեանց մէջ՝ մեծ գեր մը կը ծածկէ Դեմոկրիտոս, առևտրական ձեռնարկի մը մէջ՝ զրական ծառայութիւն մը. ի զուր կը զգուշանար որ ուրիշներ իր «հանճարի և ծախըբերու» պտուղը չվայելեն:

Իր դէմքը արժանի է մառախուղի մէջէն յայտնուելու, ո՛չ միայն Հայաստանի՝ այլ Արևելքի՝:

Հ. Կ. ՏԵՐ-ՍՈՀԱԿԱՆԱՆ

1. «Մշակ»ի 226 թուին մէջ՝ զոր յիշեցինք ի սկզբան՝ Ստ. Մալխասեանց՝ զրացուցակի մէկ աեղեկութեան վրայ հրամանած և բնագիրներու օգնութենէն զուրկ՝ կը խորիսափէ մի քանի խնդիրներու մթութեան մէջ. կ'ենթադրէ որ Պարզաւումարի 961 թուականը՝ 1512 նոյեմբեր. — 1513 նոյեմբերի կը համապատասխանէ և թէ ամէն հայ զիրը 1513ին տպուած է.

Պարզնը այս կարիքին մէջ աելի՝ պիտի հաստատուէր եթէ Փառույ և Լէինյի արտօնագիրներն աեղեկանար՝ թէ Պիհակրիտոս ո՛չ մէկ զիրը հրատարակած էր:

Փարիզու զրացուցակը՝ որուն աեղեկութիւնը Հ. Առաքելեան հազորդած է Պ. Մալխասեանի՝ հետեւալ աեղեկութիւնները կը պարունակէ.

«1498, 15 luglio: Democrito Terracino a demandé permission d'ayoir une imprimerie en arabe et en arménien».

«1513, 31 Maggio. Lelio et Paolo di Maximi demandent renouveler l'autorisation accordée à Democrito Terracino».

Դիմուլ տանը որ թէրրաչիթոյ և Փանուոյ ձեերը՝ Ստ. Մալխասեանէն զործածուած՝ սիալ են, և թէ Քրանսերէն զրացուցակը՝ 1882ին զրուած՝ R. Fuliniի մեր զիրը յիշատակած զրութեան համառոտութիւնը միայն պիտի ըլլայ.

Ս. Մալխասեանց D մենագիրը Democrito կ'ենթագրէ, իսկ Լ կարծած է Tի սիալագրութիւնը, ըայց կ'ընդունի իր ենթագրութեան անհիմ ըլլալը.

